



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ამბროსი უ.

3938

ფრანსუა ბუე.

891.99 5

2-28

ფრანსუა

1891

115

XVII

169

Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

ՄԻՆԱՍԻ ԵԶԸ

2007

(Արտատրւած «ՄՈՒՐՃ» տմեստրից)

891.995
շ-28

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԷ
1891

891.995

հ-28

56

6105

Ա. ՆՄԱԼԵԱՆ

7-3

ՄԻՆԱՍԻ ԵԶԸ

1007
801/8
2 34108

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1891

5958

ՄԻՆԱՍԻ ԷԶԸ

I

Ախալքալաքցի տաւարաժաճառ Գէորգը պատում էր Շիրակի գիւղերը և տաւար էր ժողովում Թիֆլիս տանելու վաճառելու: Նա գնած կենդանիներին իսկոյն չէր տանում իւր հետը, այլ պահ էր տալիս նոյն գիւղացիներին՝ մինչև իւր գործակատարների գալը, որոնք զանազան գիւղերում գնած կենդանիները պէտք է յետոյ ժողովէին մի տեղ և մի անգամից ճանապարհէին զէպի վաճառանոց: Այդ էր պատճառը, որ Գէորգը շատ շուտով վերջացնում էր իւր գործը մի գիւղում և անցնում էր միւսը:

Գէորգը մեծ յոյսեր ունէր այս տարւայ վերայ, որովհետև տարին՝ թէև առատ էր եղել հացով, բայց երաշտութեան պատճառով հացը կարճ էր բուսել, նորանից քիչ դարման էր ստացւել և խոտ էլ շատ քիչ էր ժողովւել: Գիւղացիները հաշուում էին կերակրի պաշարները և նոցա համեմատ կենդանիների թիւը: Աւելորդ ապրանքը պէտք է ծախսէին:

Զրակլու գիւղում շատ աներից կանչեցին Գէորգին, որ սա գայ՝ նոցա տաւարը տեսնի: Այդ կանչողներից մէկն էլ գիւղացի Մինասն էր, որ բաւական

Дозв. ценз. Тифлисъ. 31 Декабря, 1890 г.

Типогр. М. Д. Ротинианца на Голов. пр. соб д. № 41.

հարուստ տուն ունէր գիւղում: Մինասը շատ անգամ ինքը անձամբ տանում էր իւր աւելորդ ապրանքը Ալեքսանդրապոլ ծախելու: Իսկ այժմ նա ցանկացաւ օգուտ քաղել Քէրզի գաւուց՝ իւր մի եզը և մի կովը հէնց գիւղում նաղընելու:

Քէրզը հիացաւ Մինասի գոմից: Սա շինւած էր շատ ընդարձակ և գեղեցիկ էլ սալաշատակաւ: Կովերը տանը չէին, ուղարկւած էին արածելու, իսկ եզները գոմնու մն էին: Քէրզը տեսաւ մեծամարմին, կուշտ կենդանիներ, որոնք հանգիստ որոճում էին իրանց կերակուրը: Նա ուրախութեամբ կ'գնէր բոլոր եզներին, եթէ ծախու լինէին. Մինասը, ցոյց տալով մի մոյգ կարմիր գոյնով եզ, յայտնեց Քէրզին՝

— Ահա սա է ծախու եզս:

— Տեսնե՛նք, տեսնե՛նք:

Մինասը քացի տալով և յորդորելով վերկացրեց եզը նստած տեղից: Քէրզը սկսեց անդղել կենդանուն և փորձեց նորա չաղութեան աստիճանը:

II

Մինասը թողաւ Քէրզին, որ նա զբաղւի ծախու եզան մանրամասն զննութիւնով. իսկ ինքը մօտիկացաւ գոմի ծայրում կապած մի պառաւ եզան և սկսեց առանձին սիրով ու ջերմեռանդութիւնով նորան փայտաշէլ, շփելով նորա մարմինը և զրտելով մազերը: Եզը զգում էր իւր տիրոջ գգնանքը. նա

մի տեսակ խուլ բաւականութեամբ՝ կպցրել էր իւր գլուխը տիրոջ շորին և շարժում էր ուրախ իւր ազին:

Մինասը համբուրեց եզան ձակատը և ուզում էր դառնալ դէպի Քէրզը, երբ տեսաւ, որ սա եկել է և կանգնել իւր մօտ:

— Սա շատ պառաւ եզ է երևում, նկատեց տաւար ժողովորդը:

— Այո, լաւ պառաւ է:

— Քանի՞ տարեկան կ'լինի:

— Քսան տարեկան կայ, պատասխանեց Մինասը:

— Ի՞նչ ես ասում, զարմացաւ Քէրզը. պառաւ էր երևում, բայց ո՛չ այդքան: Ծօ, էլ ի՞նչու ես դորան պահում: Իսկ մինչև անգամ իմ առնելու էլ ձեռնտու չէ, միսը շատ կոշտ կ'լինի: Ծախիր, ազատիր: Ես կ'առնեմ ու ծախելու տեղ կգտնեմ:

— Ձէ, սա ծախելու չէ, սա ինձ հարկաւոր է, ասաց Մինասը լուրջ կերպով և կարծես փոքր ինչ վիրաւորւած:

— Ի՞նչպէս թէ հարկաւոր է. տօ դա մշակութիւն անել չի կարող քեզ համար:

— Ինչու, կարող է. կարող է իւր համեմատ:

— Արածը—արած չէ՛է. հաշիւ չէ. Մինաս:

— Ինձ համար մեծ հաշիւ է. առաջին հերկ սկսողս դա է լինում, ասաց մի տեսակ համոզմունքով Մինասը:

— Ձեմ հասկանում, եղբայր, քո բանը. ծախիր ու մի քանի կոպէկ էլ աշխատանք ստացիր. թէ

չէ մէկ էլ կ'տեսնես, կընկնի ու կ'սատկի:
 — Դա Աստուծու կամքն է, ասաց Տանդարու
 կերպով Մինասը:

— Ախր ինչո՞ւ ես պահում, հարցրեց զարմա-
 նալով Գէորգը:

— Աւխտ եմ արել, պատասխանեց դժւարանա-
 լով Մինասը. նա ինձ պէտք է: Նա ինձ ծառայու-
 թիւն շատ է արել. իմ ընկերն է, իմ հաւասար
 մշակ եղբայրը, իմ տուն շինողը:

— Ախր նորա կեանքը—կեանք չէ: Մորթելը
 լաւ է, քան թողնել սատկելը. խղճմտանք չէ
 պահելը:

— Զէ, Գէորգ աղա, ինձ մի խօսացնիլ: Ես չեմ
 կարող նորան ծախել: Աւրիշ ինչ եղ լինէր՝ կը ծախէի,
 իսկ սորան չեմ կարող:

Գէորգը ոչինչ չ'հասկացաւ այս խօսակցութիւ-
 նից և լռեց:

Եզը իւր դունչը մօտեցրել էր Մինասի ձեռքին
 և լիզում էր նորան: Խօսակիցները լռել էին, բայց
 տեղներիցը չէին շարժուում: Մինասը մտածութեան
 մէջ էր ընկել: Գէորգը սկսեց աւելի ու աւելի տնդդել
 եզան և զբաղւեց նորանով:

Պառաւ լծկանը մի հրաշալի կենդանի էր՝
 լաջն կազմւածքով և կարմիր գոցնով: Աչքերի շուրջը
 բոլորել էր սև օղակը, որ տալիս էր կենդանու նայ-
 ւածքին թէ գեղեցկութիւն և թէ խելացիութիւն:
 Այդ աչքերը հանգիստ էին, լի բարութիւնով ու
 բաւականութեան զգացմունքով:

Մինասը յանկարծ սթափւեց և դառնալով Գէոր-
 գին՝ շփոթւած ձայնով ասաց.

— Սորան թողնե՛նք, սա գովի ապրանք է.
 ահա ինչպէս ասացի իմ ծախելուն նա է. մէկ էլ
 տես, ինչ մտողաշն է նա. ինքը մտալի, քեզ համար
 աւելի ձեռնտու:

— Այդ ես գիտեմ: Նատ շնորհակալ եմ. բայց
 ինչո՞ւ ես ծախում այս տեսակ մարալին ու այն
 պառաւին պահում:

— Այս մարալի ձախ աչքը վնասել է անցեալ
 տարի, իսկ նոր եզնացուս հասել է, նորան կարող է
 փոխարինել:

Գէորգը հաւանեց, գնահատեց եզը և մի
 փոքր սակարկութիւնից յետոյ՝ իւր վերայ թողաւ:
 Կովը տեսնելու համար նշանակեց միւս առաւօտը:

Թողնելով Մինասի գոմը՝ նա անցաւ միւս գիւ-
 ղացիների տները և մինչև երեկոյ կարողացաւ դնելու
 մինչև քսան չորս գլուխ ապրանք:

Գիւղի տէրտէրը պատահեց Գէորգին, յայտնեց,
 որ նա էլ ծախու ապրանք ունի և հրաւիրեց երեկոն
 և գիշերը իւր մօտ անցկացնելու:

III

Երեկոցեան տէրտէրի տանը՝ օդայում՝ վառւած
 բուխարու առաջ նստած՝ խօսում էին տէրտէրը և
 մի քանի գիւղացիներ: Նոքա ըսպատում էին Գէոր-
 գին, որ դեռ փողոցներում շարունակում էր իւր

գործերը: Աերջապէս նա էլ մի երկու մարդու ուղեկցութեամբ՝ եկաւ տէրտէրի տունը: Նորա դէմքի վերայ երևում էր ժպիտ և բաւականութեան արտայայտութիւն: Ողջունելով տէրաէրին և միւսներին՝ նա նստեց նորա համար նշանակւած պատուաւոր տեղը՝ տէրաէրի հանդէպ:

— Դեռ աշուն է, շատ էլ ցուրտ չէ, սկսեց նա, բռնարներդ կարգին վառու՞մ է:

— Է՛հ, կրակը ուրախութիւն է, ասաց մի գիւղացի, ինչքան լինի՝ կրակի տեսքից մարդու սիրտ բացու՞մ է.— Ի հարկէ դեռ բռնարու ժամանակը չետոյ է:

— Ունեցողը հիմի էլ է վառում, աւելացրեց նստածներից մէկը.

— Ատուած աւելի կարողութիւն տաց, բարեմաղթեց Գէորգը.

— Ամէն, ամէն, պատասխանեցին միւսները:

Տէրտէրը շորհակալութիւն արաւ՝ գլուխը շարժելով. և մատնացոյց լինելով կրակի վերայ՝ աւելացրաւ.

— Առանց կրակի պարոն Գէորգ, ինչ կեանք. տան կրակը եթէ իսկն ասես՝ չ'պէտք է հանդէլ. մենք այցպէս ենք լսել. սա աւանդութիւն է: Եւ ճշմարիտ էլ է: Կրակը վառւելուց՝ փառաւորու՞մ ես. զգում ես, որ տունդ չի աւերւել, որ նա շէն ու հաստատ է: Բարև ես եկել Գէորգ. ինչպէ՛ս է այսօրւայ առուտուրդ:

— Լաւ է. այս տարւայ ուպրանքը առհասարակ

մասլի է: Եթէ ապրանքի զինը չ'ընկնի՝ մարդ կարող է մի երկու շահի աշխատել:

— Մարկոսնեց եղները ինչպէ՛ս տեսար, հարցրեց գիւղացիներից մէկը:

— Սիր շատ էլ չեմ հաւանում, պատասխանեց Գէորգը. ճիշտ է՝ մեծ մարմնով կենդանիներ են, բայց միս, եղ չ'ունեն. Ի հարկէ՛ նորանց ւր լաւ կերակուր տրւի՝ շատ կարգին մտացու կ'դառնան. բայց դորան էլ ժամանակ է հարկաւոր:

Փոքր ինչ առւտրական խօսակցութիւնից յետոյ՝ Գէորգը մտաբերեց այդ օրւայ Մինասի գոմում տեղի ունեցած դէպքը և նա հարցրեց գիւղացիներից՝

— Մէկ ասացէ՛ք, խնդրե՛մ, ինչո՞ւ Մինասը իւր պառաւ, անպէտքացած եզը չի ծախում:

— Հը՞, չի ծախիլ, չի ծախիլ, նկատեց կիսաժպիտով հասակաւոր գիւղացի Գրիգորը:

— Ինչո՞ւ:

— Է, դա մի ամբողջ պատմութիւն է:

— Ի՞նչ պատմութիւն է:

— Ես ձեզ մի կարճաօտ պատմեմ, ասաց Գրիգորը և կայցնելով իւր չուբուխը՝ սկսեց:

IV

Գրիգորը պատմեց հետևեալը: Սորանից տասն և հինգ տարի առաջ Մինասը շատ աղքատացաւ: Դոքա երեք եղբայր էին՝ լաւ քաջ տղերք. մէկին աւազակները սպանեցին, միւսը հիւանդացաւ մեռաւ: Այդ տարին տաւարի ցաւ էլ

պատահեց և Մինասի տաւարի մեծ մասը կոտորեց: Հինգ լուծ սպրանքից մնաց միայն մի ջահիլ եզ, որ հորիկութեան նոր էր մտել և առանձին դու լծւած չէր: Մինասը հող ունէր բաւականին, բայց զրկւած էր թէ մշակից, թէ եզնից: Անդանի մնացած կովերից երկուսը ծախեց և մի եզ գնեց, որպէս զի իւր մօտ եղած եզնով կարողանայ գոնէ մի լուծ շինել: Այդ իմ պատմած ջահիլ եզը, — այն հիմիկւայ պառւած եզն է, որ, Քէորգ խնամի, տեսար Մինասի գոմումը:

Այդ լուծով նա բանեց մի ամառ. բայց շատ քիչ վարեց: Միւս տարւայ համար եզը բաւականին մեծացել և ամրացել էր: Մինասը վճռել էր այդ տարին մեծ վար անելու: Մեր տեղերում, ինչպէս գիտէք, վարում են և երկու լուծով և մի լուծով — բայց մի լուծով բանողները կամ գոմէշ են լծում կամ ուժեղ եզներ: Մինասի թէ ջահիլ եզը և թէ նոր գնած եզը մեծ ոյժ չ'ունէին. այնու ամենայնիւ՝ Մինասը մի լուծ միայն դործածեց վարելու համար: Վարում էր նա անդադար մօտ երեք շաբաթ: Խեղճ եզները յօգնել էին. բայց Մինասը մտքումը դրել էր մեծ վար անելու: Նա իւր վերայ ուշք չէր դարձնում, աշխատում էր առաւօտից մինչև երեկոյ: Կարգին գութանավարի մասին նա մտածել անգամ չէր կարող, նա արօրով փորփրում էր հողը: Մենք հարեաններս զարմանում էինք՝ տեսնելով Մինասի և նորա եզների անյօղութիւնը: Մինասն էլ՝ քանի որ իւր և եզների ոյժը պատում էր՝ շարունակում էր դործը:

Այդ օրերից մէկում՝ ես գնում էի հանդը և պէտք է անցնէի Մինասի հերկով: Տեսնում եմ հեռուից, որ եզները կանգնած են և Մինասը ինքը չի բանում: Փոքր ինչ մօտիկանում եմ և տեսնում եմ նորան չոքած և ձեռքերը տարածած, ինչպէս աղօթքի ժամանակ պարզում են դէպի Աստուած: Առաջ եմ գնում, Մինասը չի լսում: Եւ իսկապէս նա աղօթում է: Վերջապէս այնքան մօտեցայ, որ լսեցի նորա բարձրաձայն աղօթելը: Առաջ խօսքերը հասնում էին ինձ կցկտուր, իսկ յետոյ՝ բաւականին պարզ՝ լսեցի հետեւեալը:

«Մեր մեղքը մոռացիր, Տէր Աստուած, դու ներիր մեզ, բարերար Աստուած... ախ՛, խեղճերը ինչքան տանջւում են մեր ձեռքից... ինչ պատասխան պէտք է տանք Քեզ...»

Ես վերջապէս կանչեցի՝

— Մինաս, ինչ աղօթք անելու ժամանակ է. աս, վերկա՛ց, ինչ է պատահել:

— Գրիգոր. ասաց Մինասը, նայելով վերաս զարմացմամբ:

— Ի՛նչ ես չոքել, հարցրի նորան.

— Գրիգոր, պատասխանեց նա, սիրտս թոյլ է, գլուխս պտուռում է... օ՛հ խեղճ եզ, խեղճ եզբայր:

Մինասը շարւած դուրսեան մէջ էր: Յանկարճ նա վեր կացաւ, վազեց իւր ջահիլ եզան մօտ, ճակտոր պաշեց, գլուխը շփեց, վզովը փարեց և մղկտալով՝ ասաց եզան.

— Ինձ կ'բաշխես, իմ ընկե՛ր, մեղաւոր եմ առաջիդ .

Մինասը կանգնած էր անշարժ իւր եզան առաջ և մոռացել էր իմ ներկայութիւնը :

— Տօ՛, ի՛նչ է պատահել քեզ : Մինաս, հարցրի նորան :

— Ե՛հ, Գրիգոր, ձեռքով արաւ ինձ, թէ Աստուած կ'սիրես, ինձ մի խօսացնիլ . խելքս կորցնում եմ . ինքս էլ չեմ իմանում թէ ինչ եմ անում :

— Ի՛նչ է եղել, ասա՛, իմանանք էլի, հեր օրհնած .

— Ե՛հ, Գրիգոր, գլուխը թափ տալով պատասխանեց նա, ամաչում եմ, եղբայր, ասել զլսիս եկածը . ինքս լաւ եմ հասկանում իմ բանը, բայց կարգին չեմ կարող քեզ պատմել . դու կը ծիծաղես վերաս, ցաւս չես հասկանալ :

— Ի՛նչ լաւ, ասա, հիմի մի կերպ կ'աշխատեմ հասկանալու :

Մինասը փոքր ինչ շարժեց գլուխը, ձեռքերը խփեց ճակատին, տրորեց ականջները, պռոշները կրճոտեց և վերջապէս բերանը բացեց :

— Ինքզ գիտես, սկսեց Մինասը, որ այսօր քսան երրորդ օրն է, որ ես առանց մի կարգին հանգստութիւն տալու՝ բանեցնում եմ եղանս : Ահա չորս օր է, որ խեղճը էլ չի կարողանում բան անել . բայց ես ի՛նչ անեմ, ես ի՛նչ ասեմ իմ տանեցիներին, ինչպէ՞ս նոցա քաղցած բերանները լիացնեմ ձմեռը : Գիտէի, որ եղս ուժից ընկել է, բայց էլի բօթում

էի, էլի դրգում էի : Երեկ կարծում էի թէ՛ էլ չի կարողանալու բան անի . բայց կարողացաւ մի կերպ : Այսօր առաւօտեան՝ օտները շարժել չէր կարողանում, մի կէս ժամ շարշարում էր, մինչև որ օտները բացեցին :

ձաշի դէմ՝ մի քիչ հանգստացրի, յետոյ էլի սկսեցի բանել . մի չորս ժամ կայ՝ բանում եմ . բայց վայ այն բանելուն : Ձէ, տեսայ եզս բոլորովին կանգնում է , ի՛նչ անեմ : Մի քանի ժամուայ բան է մնացել, որ բոլորովին այս տարւայ վարս վերջացնեմ : էլի խփեցի, էլի հրեցի : Խեղճը մի քիչ էլ դնաց և վերջնականապէս նա կանգնեց : Բարկութիւնս մի կողմից՝ խղճմտանքս միւս կողմից՝ ինձ պաշարեցին . սկսեցի ծեծել, յորդորել՝ ոչինչ չեղաւ . յանկարծ ձեռքս կարծես դժեց և հաստ մահակով մի հարւած հասցրեց գլխին, այնպէս հարւած, որ կարծես թէ սպանելու . նստատակով էր հասցնում : Հարւածից՝ եզս երերեց, իսկ ես սարսափեցի : Վազեցի եզանս մօտ և տեսայ, որ խեղճի աչքից արտասուէք է կաթում . ես ինձ կորցրի . «Այսքան էլ անգթութիւն... մրմնջացի և աննկատելի կերպով ծուկ չոքեցի ու սկսեցի աղօթել Աստուծուն, որ նա ինձ ների :

Մինաս, ասացի նորան, հանգստացիր, դէ բան է փորձանք է՝ պատահել է :

- Ախր խեղճ չէ՞ կենդանին :
- Խեղճ է, ի հարկէ, բայց ի՛նչ արած :
- Նա բանի՞ մենք ուտնք :

— Ի՞նչ ես ասում, Մինաս, է՛հ զու էլ, — նա մեզ է կերակրում՝ մենք էլ նորան ենք պահպանում:

— Ինչ ուզում ես ասա, բայց մեզնից խիստ պահանջ է անելու Աստուած:

Մի կերպ Մինասը հանդատացաւ: Աստուած տւաւ, ցանքսը չաջող դուրս եկաւ, Մինասը շահեց, տունը փոքր ինչ կարգի բերաւ, սկսեց մարդամիջի տեղ ունենալ: Կամաց կամաց եղների, տաւարի թիւը շատացրեց: Հիմի տեսնու՞մ էք, ինչ հարուստ մարդ է դարձել մեր գիւղում: Այն եզան նա համարում է իւր հարստութեան աղբիւր. նորանով է սխում իւր առաջին ակօսը մինչև այժմ: Թէև եզը քսան տարեկան է, բայց էլի գարնան՝ տանում է վարի սկզբին դնում. փոյթ չէ ինչքան է գնում եզը, միայն թէ հողը տեղից շարժւի այդ եզան միջոցով:

Վ

Լսողները շատ հետաքրքրւած էին, սկսեցին մի բանի աւելւածներ անել, իրանց դիտողութիւններից և անտեսութիւններից օրինակներ բերել: Մի ծեր գիւղացի էլ՝ գլուխը շարժելով՝ ասաց խրատական ձայնով՝ — Է՛հ, զուր չէ Ղազախու հայը ասում թէ՛

Ես մատաղ եմ եզանը՝

Որ կը պահի խիզանը.

Աստուած էլի զուլթ տայ՝

Մեր անարար եզանը:

Տէրտէրը, որ առանձին հետաքրքրութիւնով լսում էր այդ բոլորը, մէջ մտաւ:

— Ի՛է, որ այդքանը գիտէք, էլ մեղք և պարտազանցութիւն չի համարւիլ, որ մէկ բան էլ ես աւելացնեմ: Ախր մեր Մինասը երեք տարի չէր հաղորդոււմ. ասում էր թէ ապաշխարում է. յետոյ հաղորդելուց միայն խնայ՝ թէ մեղքը — այդ եզան խփելն է, որ պատմեց Գիրգորը:

— Տէրտէր, իսկն ասենք, անգութ բան շատ ենք անում մեր եզների հետ. միթէ՞ զորան դատաստան չը կայ:

— Կայ, կը լինի, որդիս, արա եզը — շունչ չէ՞, ապա նա կենդանի չէ՞, ցաւ զգացող չէ՞:

Գիւղացիները շատ հետաքրքրեցին այդ խնդրով և սկսեցին տաք խօսակցութիւն: Երբ որ բաւականաչափ դատողութիւններ արւեցին ամեն տեսակի, խօսքը կրկին շուռ եկաւ Մինասի եզան վերայ: Գրիգորը, որ այնքան բան էր պատմել արդէն, կարծես սպասում էր այդ բոպէին: Նա գլուխը շարժելով՝ մէջ մտաւ:

— Արա, այս տեսակ բան է կղել աշխարհքումս: Մեր Մինասը զուր տեղը չէ իւր եզանը պինդ բռնել կանգնել: Մինասը ուխտ է արել, որ այդ եզանը պէտք է չը մորթի, մինչև վերջը իւր մօտ պահի, որ նա, ինչքան կեանք նորան սահմանւած է՝ ապրի, որ նա իւր բնական մահով վերջանայ՝ խոր ծերութեան հասնելով:

— Լաւ, զորանից էլ ծե՞ր:

— Ով գիտէ, ասում են, որ եզների մէջ մինչև քսան հինգ տարի ապրող էլ կայ:

— Մինասի եզը, շարունակեց Գրիգորը, իսկապէս
այժմ մի զարմանալի եզ է դարձել, ապրում է Մի-
նասով: Եթէ մի երկու օրով սա բացակայ եղաւ,
տխրում է. իսկ երբ՝ զիցուք՝ Մինասը եկաւ ու
նորան շփեց փայփայեց՝ նա զւարթանում է: Մինասը,
որ տեսնում է իւր եզան ուրախութիւնը ու զւար-
թանալը, այնպէս է ուրախանում, որ կարծես թէ
հարազատ արիւնակիցը լինի:

Անասնավաճառ Գէորգի վերայ այնպէս սաստիկ
ազդեց պատմութիւնը, որ նա զգացմունքով ասաց.

— Ապրի Մինասը, շատ ապրի: Ծառ լաւ է
անում, որ չի ծախում: Բայց մի բան ասեմ, մի
խոստովանք չայանեմ, որ նորա պատմութիւնը ինձ մի
քիչ ցնցեց... Մի թէ ես էլ, ուրեմն, անասունների
դահիճը կամ գոնէ դահճի միջնորդն եմ:

Գիւղացիները լռեցին, ոչինչ չը կարողացան
նորան պատասխանել:

3938

ԳԻՆՆ Է Յ ԿՈՊ.

Վաճառում է Թիֆլիսի հաշ գրավաճառանոցներում
և Վաթնի-ի խմբագրատանը:

1058000

20 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0008301

